ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ------- 2022 թվականի № ----Ա
քաղ. Երևան

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՌՈՄԱՆ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2021 թվականի դեկտեմբերի 29-ի N494Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) համաձայն՝ Որոշմամբ սահմանված ձևերին համապատասխան հաշվետվությունները Հանձնաժողով են ներկայացվում տարվա յուրաքանչյուր կիսամյակի համար՝ մինչև հաշվետու կիսամյակին հաջորդող ամսվա 30-ը,

բ) անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանը 2022 թվականի ընթացքում խախտել է Որոշման պահանջը, սակայն «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի հիմքով Հանձնաժողովի կողմից վարչական վարույթ չի հարուցվել, որի վերաբերյալ վերջինս ծանուցվել է 2022 թվականի հունիսի 15-ի №ԳԲ/34.2-Մ2-7/1938-2022 գրությամբ,

գ) անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանը Որոշման N2 հավելվածով հաստատված ձևին համապատասխան 2022 թվականի 1-ին կիսամյակի հաշվետվությունը (այսուհետ՝ Հաշվետվություն) Հանձնաժողով է ներկայացրել 2022 թվականի օգոստոսի 2-ին՝ Որոշմամբ սահմանված ժամկետից հետո,

դ) Որոշմամբ սահմանված պահանջի չկատարման փաստի ուսումնասիրման նպատակով Հանձնաժողովը անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանի նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 6-ից հարուցել է վարչական վարույթ, որի

վերաբերյալ վերջինս ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 6-ի №ԳԲ/34.2-Մ2-7/3017-2022 գրությամբ,

ե) անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանը վարույթի շրջանակում քննարկվող հարցի վերաբերյալ դիրքորոշում չի ներկայացրել,

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանը հերթական անգամ խախտել է Հաշվետվության ներկայացման՝ Որոշմամբ սահմանված պահանջը, և

հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշմամբ սահմանված պահանջի խախտման համար անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանին նախազգուշացնել:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անհատ ձեռնարկատեր Ռոման Խաչատուրի Մկրտչյանին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- ---------- 2022թ.